ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/05

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.12.2019թ. թիվ 26/26-1/21794-2019 գրությամբ Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 30.12.2019թ. թիվ ՊՆ/02/3029-2019 գրության հիման վրա, 30.12.2019թ. թիվ 26/26-1/21794-2019 գրությամբ նախաձեռնել է Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/05 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.12.2019թ. թիվ ՊՆ/02/3029-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար «Գրասենյակային գույքի և կենցաղային կահույքի» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/2» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 73-րդ չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչվեց Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ն, որին անգործության ժամկետի ավարտից հետո հրավերով սահմանված կարգով 11.12.2019թ. էլեկտրոնային եղանակով ծանուցվեց պայմանագրի նախագիծը և առաջարկվեց կնքել պայմանագիր: Սակայն 26.12.2019թ. գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ն օրենսդրությամբ սահմանված ժամկետում չներկայացավ պայմանագիր կնքելու: Հաշվի առնլով վերը նշված հանգամանքը և հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 7.16 կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 73-րդ չափաբաժնի մասով մերժել Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ի հայտը և վերջինիս տվյալներն ուղարկել լիազորված մարմին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/05 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/05 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/05 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.10.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 73-րդ չափաբաժնի մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ն Ընթացակարգի 73-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, որին 11.12.2019թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.12.2019թ. թիվ 26/26-1/21794-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 30.12.2019թ. թիվ ՊՆ/02/3029-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.10.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 73-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ն Ընթացակարգի 73-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, որին 11.12.2019թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության՝ Մասնակիցը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում

պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Արձանագրում եմ, որ Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո Օրենքով սահմանված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, դրանով իսկ ըստ էության հրաժարվելով պայմանագիր կնքելուց:

Գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, հետևաբար առկա են Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.12.2019թ. թիվ 26/26-1/21794-2019 գրությամբ Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**